ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » օգոստոսի 2016 թ. N 191 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ, ՔԱՂՑՐԱՇԵՆ, ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄՈՐԵԽՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) 2016 թվականի օգոստոսի 1-ի N 059 գրությունով ներկայացված մոնիտորինգի արդյունքները՝ մորեխների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2016 թվականին մորեխների դեմ քիմիական պայքար իրականացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ, Քաղցրաշեն, Պարույր Սևակ և Երասխ համայնքներին (այսուհետ՝ համայնքներ) հատկացվող <<Ցիպեր մաքսի>> բույսերի պաշտպանության միջոցի (այսուհետ՝ բույսերի պաշտպանության միջոց) չափաքանակները՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝

1) ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի համաձայն բույսերի պաշտպանության միջոցի հանձնումը համայնքների ղեկավարներին կամ վերջիններիս կողմից լիազորած անձանց.

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ռ. Մակարյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գյուղատնտեսության նախարարի

2016թ.---------- ի ----- Ա հրամանի

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈՐԵԽՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ, ՔԱՂՑՐԱՇԵՆ, ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ <<ՑԻՊԵՐ ՄԱՔՍԻ>> ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

Համայնքը	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը, լիտր	Աշխատանքի ծավալը, հեկտար
Նարեկ	21	140
Քաղցրաշեն	9	60
Պարույր Սևակ	21	140
Երասխ	9	60
Ընդամենը	**60**	**400**